## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԾՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/2–ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-7/7» ծածկագրով ԾՀ ընթացակարգի արդյունքում 24.02.2016թ. կնքված № ԾՀԱՊՁԲ-7/7-2 ծածկագրով պայմանագրում 2017թ-ի փետրվարի 13-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ:** Համապատասխան ֆինանսկան միջոցների նախատեսումը:

**Փոփոխության նկարագրություն** Նկատի ունենալով, որ հատկացվել է համապատասխան ֆինանսական միջոցներ՝ կնքվել է համաձայնագիր 2018թ. մասով ապրանքների ձեռք բերման /ծառայությունների մատուցման/ պայմանագրը ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 1.2, 7.1 և 7.2 կետերը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի գլխավոր մասնագետ Տ. Բաղդասարյանին:

**Հեռախոս՝ <u>010-29-44-18:</u>**

**Էլ. փոստ՝ t.baghdasaryan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

Հավելված N 1

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| հ/հ | Գնման առարկան | Չ/մ | քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը 2018թ. Ըստ ամիսների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպ. | հոկտ. | նոյեմբ. |
| 1. | Ջեմ տեղական /Ջեմ/ | կգ | 56497 | 475 | 26836075 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7497 |
| 2. | մուրաբա տեղական /Մուրաբա մորու/ | կգ | 17502 | 1050 | 18377100 | - | - | - | - | - | 5834 | 5834 | 5834 |

Ընդամենը 45 213 175 (քառասունհինգ միլիոն երկու հարյուր տասներեք հազար հարյուր յոթանասունհինգ) **ՀՀ դրամ**

Հավելված N 2

## Վճարման ժամանակացույց

| հ/հ | Գնման առարկան | *Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2018թ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | CPV կոդը | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | դեկտեմբեր |
| 1 | Ջեմ տեղական /Ջեմ/ | 15332290 /1/10/3 | 3325000 | 6650000 | 9975000 | 13300000 | 16625000 | 19950000 | 23275000 | 26836075 | 26836075 |
| 2 | մուրաբա տեղական /Մուրաբա մորու/ | 15332230 /1/10/3 | - | - | - | - | - | 6125700 | 12251400 | 18377100 | 18377100 |

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՇՀԱՊՁԲ-7/7-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 13.02.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Համլետ Հովսեփյանը, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 24.02.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/7-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.1 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **45 213 175 (քառասունհինգ միլիոն երկու հարյուր տասներեք հազար հարյուր յոթանասունհինգ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | Ա/Ձ Համլետ Հովսեփյան |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք. Ապարան, Բաղրամյան 45/24 |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/h 2500010016510100 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 55807352 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ | |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ |

Հավելված N 1

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| h/h | Գնման առարկան | Չ/մ | քանակը | Միավորի գինը, ՀՀ դրամ | Գումարը, ՀՀ դրամ | Ապրանքի մատակարարումը 2018թ. Ըստ ամիսների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպ. | հոկտ. | նոյեմբ. |
| 1. | Ձեմ տեղական /Ձեմ/ | կգ | 56497 | 475 | 26836075 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7000 | 7497 |
| 2. | մուրաբա տեղական /Մուրաբա մորու/ | կգ | 17502 | 1050 | 18377100 | - | - | - | - | - | 5834 | 5834 | 5834 |
| Ընդամենը 45 213 175 (քառասունհինգ միլիոն երկու հարյուր տասներեք հազար հարյուր յոթանասունհինգ) **ՀՀ դրամ** | | | | | | | | | | | | | |

Հավելված N 2

## Վճարման ժամանակացույց

| h/h | Գնման առարկան | *Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2018թ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | CPV կոդը | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտ. | հոկտ. | նոյեմբ. | դեկտեմբեր |
| 1 | Ձեմ տեղական /Ձեմ/ | 15332290 /1/10/3 | 3325000 | 6650000 | 9975000 | 13300000 | 16625000 | 19950000 | 23275000 | 26836075 | 26836075 |
| 2 | մուրաբա տեղական /Մուրաբա մորու/ | 15332230 /1/10/3 | - | - | - | - | - | 6125700 | 12251400 | 18377100 | 18377100 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի Պ/Կ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

Ա/Ձ Համլետ Հովսեփյան
ք. Ապարան, Բաղրամյան 45/24
«ԱրմՄվիսԲանկ» ՓԲԸ
Հ/հ 2500010016510100
ՀՎՀՀ 55807352

Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ